ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/14

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 30.01.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն 30.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով դիալիզի համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է էլեկտրոնային աճուրդ, որի բացման օրը (էլեկտրոնային աճուրդը սկսելու օր) եղել է 28.01.2019թ. ժամը 10:45-ին:

Բողոքի առարկան և հիմքն են հանդիսանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ, 50-րդ հոդվածները և ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 14-րդ կետը, այն է՝ Էլեկտրոնային աճուրդը չի կարող կազմակերպվել ժամը 16:00-ից հետո և ոչ աշխատանքային օրերին: Եթե էլեկտրոնային աճուրդն սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ,

ապա էլեկտրոնային աճուրդը վերահայտարարված է համարվում տվյալ ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին:

Հաշվի առնելով վերոգրյալը պարզ է դառնում, որ խախտվել է ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 14-րդ կետը:»:

«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

Դադարեցնել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով դիալիզի համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդը և եթե կնքվել է պայմանագրեր, կնքված պայմանագրերը հայտարարել չեղյալ:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Արսեն Միերյանը:

2. <u>«Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը 30.01.2019թ. գրությամբ դիմել է «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ին՝ խնդրելով Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

«Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն ՓԲԸ-ի կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 30.01.2019թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը.

«Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար՝ դիալիզի համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն:

ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով սահմանված է՝

- հրապարակման ժամանակ՝ 17.01.2019թ. ժամը 10:38:29,
- հայտերի ընդունման վերջնաժամկետ՝ 24.01.2019թ. ժամը 10:45:00,
- հակադարձ աճուրդ 28.01.2019թ. ժամը 10:45:00:

«ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ն 30.01.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդը կազամակերպված է ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 14-րդ կետի խախտմամբ, այն է ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի բացումը տեղի է ունեցել 28.01.2019թ.՝ ոչ աշխատանքային օր:

«Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ բանակի օրը նշվում է հունվարի 28-ին, ոչ աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 14-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդը չի կարող կազմակերպվել ժամը 16:00-ից հետո և ոչ աշխատանքային օրերին: Եթե էլեկտրոնային աճուրդն սկսելու օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա էլեկտրոնային աճուրդը վերահայտարարված է համարվում տվյալ ոչ աշխատանքային օրվան հաջորդող աշխատանքային օրվա նույն ժամին:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 28.01.2019թ.,
- «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքի համաձայն հունվարի 28-ը համարվում է ոչ աշխատանքային օր:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ն ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հակադարձ աճուրդի ժամկետը 28.01.2019թ. սահմանելով՝ խախտել է ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 14-րդ կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի կողմից 30.01.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել ԶՄՄԱԲԿ-ԷԱՃԱՁԲ-07/19 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ ընդունել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից դիալիզի համար անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդը չեղյալ հայտարարելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ